№ 235 ԿԻՐԱԿԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26 1903 ԿԻՐԱԿԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26 № 235

ԵՐԵՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարւում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Կիրակի, հոկտեմբերի 26-ին, Խօջիվանքի գերեզմանատան եկեղեցում կը մատուցանուի պատարագ և ապա հոգեհանգիստ կը կատարուի հանգուցեալ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԵՐԻՑԵԱՆԻ

գերեզմանի վրայ, որից յետոյ տեղի կունենայ արձանի բացումը։ Այս մասին Երիցեանի ընտանիքը ծանուցանում է ի գիտութիւն հանգուցեալի յարգողների և բարեկամների։

2—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական տեսութիւն.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ինչ է վիճակագրութիւնը. Մատենագրութիւն. Ցեղագրութիւններ միօրեայ վիճակագրութիւնից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հեռաւոր Արևելքում. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. Մանրանկար.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. —ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. —ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հայ կեանքէն։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Հեռագիրները հաղորդեցին Թագաւոր Կայսրի տեսակցութեան մասին գերմանական կայսրի հետ, որի միջոցին Ռուսաստանի և Գերմանիայի արտաքին գործերի մինիստրները ունեցան խօսակցութիւններ ընթացիկ քաղաքական խնդիրների վերաբերութեամբ։ Անկասկած այդ տեսակցութիւնը և խօսակցութիւնները նշանակութիւն կունենան միջազգային քաղաքականութեան ընթացքի և բնաւորութեան համար։ Եւ մերձակայ ապագան կը բացայայտէ, թէ ինչ որոշումներ են կայացել Վոլֆսգարթէնում և Դարմշտադտում։

Մեր ընթերցողները գիտեն, որ Ֆրանսիան վերջին ժամանակներս մտերմութիւն ցոյց տուեց դէպի Անգլիան և Իտալիան։ Հարց էր ծագում, թէ արդեօք այն մտերմութիւնը սկիզբ չէ քաղաքական նոր դաշնակցութիւնների և թէ արդեօք փոփոխութեան չեն ենթարկվել արդէն ռուս-ֆրանսիական յարաբերութիւնները։ Այդ հարցին պատասխանում է ռուսաց Կայսրի նամակը ուղղված ֆրանսիական հանրապետութեան նախագահին։ Այդ նամակը, որ յանձնեց նախագահին ռուսաց արտաքին գործերի մինիստր Լամզդորֆ, անձամբ գնալով Պարիզ, յայտնում է, որ Ռուսաստանը շատ հաշտ աչքով է նայում Ֆրանսիայի մերձեցման վրայ իր հարևան երկու պետութիւնների հետ և դրա մէջ տեսնում է ընդհանուր եւրոպական խաղաղութեան նշաններից մէկը։

Արդարև եւրոպական պետութիւնները անկախ այն երկու դաշնակցութիւններից, որոնցով սահմանված են մի կողմից ռուս-ֆրանսիական, իսկ միւս կողմից աւստրո-գերմանո-իտալական միութիւնները, արգելք չեն համարացել, որ առանձին պետութիւններ որոշ հարցերի վերաբերութեամբ կայացնեն համաձայնութիւններ միմեանց մէջ։ Այդպէս օրինակ, Ռուսաստանը Աւստրիայի հետ համաձայնութեան որոշ կէտեր մշակեցին Մակեդոնիայի վերաբերութեամբ, որոնցով սկսեցին ղեկավարվել Մերձաւոր Արևելքի իրանց քաղաքականութեան մէջ։ Այդ համաձայնութեան մէջ մասնակցում է մէկը երկպետեան, իսկ միւսը երեքպետեան դաշնակցութիւնից և այնուամենայնիւ այդ հանգամանքը չէ խախտում հիմնական դաշնակցական կապերը։ Նոյնպէս մենք նկատում ենք, որ պետութիւնների մէջ կայացնվում են համաձայնութիւններ առևտրական և ուրիշ յարաբերութիւններ կանոնաւորելու նպատակով։

Մերձաւոր և Հեռաւոր Արևելքի գործերում նոր փոփոխութիւններ տեղի չեն ունեցել։ Թիւրքաց սուլթանը մինչև այժմ դեռ չէ ընդունել ռուս-աւստրիական ծրագիրը իր ամբողջութեամբ և ներկայացրել է իր կողմից նկատողութիւններ երկու կէտի վերաբերութեամբ, որոնց մէջ նա խախտված է տեսնում իր վեհապետական իրաւունքները։ Ըստ երևոյթին մի քանի շաբաթներ կանցնեն մինչև որ Թիւրքիայի և պետութիւնների մէջ կը կայանայ վերջնական համաձայնութիւն ռէֆօրմների հիմնական սկզբունքների մասին։

Հեռաւոր Արևելքի վերաբերութեամբ շարունակվում են բանակցութիւններ Ռուսաստանի և Ճապօնիայի մէջ։ Պատերազմասիրական ոգին դեռ չէ թուլացել Ճապօնիայում և նա խրախոյսներ է ստանում Ամերիկայից և Անգլիայից, ուր շատ կան մարդիկ, շահագրգռված այն բանով, որ Մանջուրիան բաց մնայ միջազգային առևտրի և ազդեցութեան համար և չենթարկվի Ռուսաստանի բացառիկ հեղինակութեան ոյժին։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՆՉ Է ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Թիֆլիսի քաղաքային վարչութեան մէջ հարց է բարձրացել հաստատել քաղաքային վիճակագրական բիւրօ, որպէս զի կարելի լինի սիստեմատիկաբար հաւաքել վիճակագրական տեղեկութիւններ և ամենայն քաղաքի ճիշդ պատկերը, որի միջոցով քաղաքը կարողանայ, ինչպէս հայելու մէջ, տեսնել իր լաւ և վատ կողմերը։

Ինչ է վիճակագրութիւնը և ինչի է ծառայում։

Վիճակագրութիւնը հասարակական երևոյթների թւական ուսումնասիրութիւնն է. այդպէս է սահմանել ֆրանսիացի գիտնական Լևասէր և դա ամենաճիշդ որոշումն է։ Դուք վերցնում էք մի վիճակագրական աղիւսակ, ուշադրութեամբ քննում էք և ձեր առաջ բացվում են մի շարք պատկերներ. աղիւսակի թւերը մեռած չեն, նրանք խօսում են և պերճ փաստերով ջախջախում են այս կամ այն տեսութիւնը, որ հիմնված է ոչ հաստատուն վիճակագրական ուսումնասիրութիւնների, այլ ենթադրութիւնների վրայ։

Այժմ, երբ արդիւնաբերութիւնը հսկայական քայլեր է անում, երբ կապիտալիզմը կլանելով ամեն ինչ, ստեղծում է ամեն օր նորանոր քաղաքներ և նոր երևոյթներ, այդ բոլորը լաւ պատկերացնելու և ըմբռնելու համար հարկաւոր են բազմակողմանի և մանրակրկիտ ուսումնասիրութիւններ, հարկաւոր են փաստեր, փաստեր, որոնք զինված լինեն անհերքելի թւերով, որոնք հայելու պէս պատկերացնէին մեր դրութիւնը իր լուսաւոր և մթնոտ կողմերով։ Այժմ չը կայ մի գիտութիւն, որ չը դիմէ վիճակագրութեան օգնութեան. նրանից օգտվում են համայն մարդկութիւնը, հասարակութեան բոլոր խաւերը։

Հարկաւոր է լինում մի տեղ երկաթուղի անցկացնել, դրա համար անհրաժեշտ է վճռել՝ արդեօք արժէ թէ չէ, և ահա վիճակագրութիւնը թւերով ցոյց կը տայ ներմուծվող և արտահանվող ապրանքների տեսակը և քանակութիւնը։ Մի ուրիշ տեղ գործարանների համար վաճառանոց է հարկաւոր, դարձեալ դիմում են վիճակագրութեան, որը ցոյց է տալիս, թէ որտեղ այդ ապրանքից պակաս է և որտեղ առատ է։ Կամ մի տեղ հացահատիկների առատութիւն է, միւս տեղ սով, այստեղ դարձեալ վաճառականները օգտվում են վիճակագրութիւնից։ Վերջապէս հարկաւոր է գիտենալ քաղաքի որ մասում հարկաւոր է բաց անել վարակիչ հիւանդութիւնների համար հիւանդանոց, վիճակագրութիւնը շատ պարզ կերպով կպատասխանէ, թէ որ քաղաքամասում հարկաւոր է բանալ։ Շնորհիւ վիճակագրական կանոնաւոր բիւրօների (օրագրութիւնների) Ամերիկայի բանւորական սինդիկատները կարողանում են իրանց անգործ բանւորների համար գործ գտնել, տեղափոխելով նրանց այնտեղ, որտեղ աշխատող ձեռքերի պակասութիւն է զգացվում։

Մի քաղաք, որ ունի 150,000-ից աւելի բնակիչ, որը ձեռնարկել և ձեռնարկում է մի շարք բարեփոխութիւններ մտցնել, կարող է արդեօք գործել առանց մշտական վիճակագրական բիւրօ ունենալու և առանց մինչև անգամ իմանալու ճշտիւ, թէ որքան բնակիչ ունի քաղաքը, որ դասակարգը ինչ կարիքներ ունի,

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅ ԿԵԱՆՔԷՆ

—

Սուքիաս վարդապետ Պարոնեան

Վենետիկ, օգոստոս 12-ին

Ղարիպութեան մէջ մեր հայրերը կարօտով կռունկին բերանը կը հայցէին անոր աշխարհէն խաբրիկ մը առնելու համար։ Կռունկը հիմակ մինչև Եւրոպա չի թռիր։ Եւ ինչու ալ յոգնի. իր տեղը թերթը կը տուրայ, դեռ կէս թաց, կէս չոր։

Հատած օրագիրներուն գօտիները կը պատռենք արտորնորով։ Չար խապարի մը վախը պանդուխտին սիրտը ամեն օր վրդովելով կը պահէ։ Եւ երբ լրաբերը կը բանանք, աչքերնիս են առաջ կը չէրի դէպի այն սիւնակը, որ «Ազգային» կը կոչուի։ Ու հանգստութիւն կը զգանք, եթէ հոն չը նշմարենք երկուհատ գիծ, իբրարու զուգահեռական։

Բայց ան շրջանակը յաճախ կը տխրաբայլի ու մեզի կը տրտմեցնեն ծանուցումները մինչև իսկ այնպիսի մահերու, զորս անտարբերութեամբ պիտի լսէինք երկիրը գտնուած ատեննիս։ Հեռաւորութիւնը, ժամանակը և ցեղին գլխուն տեղացած ու տեղացող ձիւնը մեր սրտերը կը մեղմացնեն։

Այդ երկու սև գծերը մեզի իմացուցին Պարոնեան Սուքիաս վարդապետին մահուան լուրը։ Փոխանակ «լուրի», հաւանօրէն «ցաւ» պիտի ըսէի, եթէ հանգուցեալը իր համբաւած հմտութիւնը մէկ կոթող յիշատակարանը թողած ըլլար։ Այդ նախկին Միխիթարեանը շատ բան գրեց, բայց քիչ բան տուաւ իր ցեղին։ Եւ տուածն ալ, աշխարհաբարով մը, զոր կարդացած ատեննիս կը հարցնէինք «ինչու գրաբար չի գրեր», որպէս զի կարենայինք իր միտքը թափանցել առանց շատ նեղուելու։ Իրաւ ալ, Բագրատունիին «Հայկ Դիւցազնը» աւելի դիւրահասկանալի է, քան Սուքիաս Պարոնեանի մը կամ Մաղաքիա Գարագաշեանի մը աշխարհաբար շարադասութիւնը։ Կ'ըսուի, թէ անոնք տրամաբանօրէն կը գրեն։ Թերևս, բայց աղաւաղաբար՝ բնականօրէն չեն գրեր։

Պարոնեանէն կը մնայ ստուարահատոր հաւաքածոյ մը, տեսակ մը «Հայկարան», ուր նշանակված են անունները այն բոլոր հեղինակներուն, գրքերուն, հանդէսներուն, տեսարաններուն, որոնք հայ ցեղին վրայ խօսած են։ Հաւաքածոյին մէջ ամեն ինչ մանրամասնօրէն նշանակուած է, հանդերձ ծանօթագրութիւններով և ընդօրինակութիւններով։ Այս գործը տարիներ առաջ պիտի տպագրուէր Վենետիկ, բայց հրատարակման պայմաններուն վրայ գոյացած համաձայնութիւնը չը գործադրուեցաւ, ձեռագիրը ամբողջովին կանոնաւորապէս պատրաստուած չըլլալով։

Ո՞ւր է այժմ այդ Հայկարանը, ապահով տեղ մը, թէ կորսուելու վտանգին ենթարկուած։ Չեմ գիտեր։ Պէտք է սակայն զայն փնտռել և պահել։ Անոր անփոյթ ապաւինարանը Սուրբ Ղազար միայն կարող է ըլլալ, ուր նաև կարելի է տպագրութեան ձեռնարկել։ Հոն է, որ այդ մեծ աշխատութիւնը հետզհետէ նորանոր յաւելումներով կրնայ շարունակուիլ ու կատարելագործուիլ։

Հանգուցեալ վարդապետը ինչ ոճով ու ինչ աշխարհաբարով ալ որ գրած ըլլայ, բայց և այնպէս տեղ մը ունի մեր բանասիրական ու պատմագրական մատենագրութեան մէջ։ Հրատարակած է բազմաթիւ յօդուածներ, ընդարձակ, և հմտութեամբ լեցուն. վերջին գործը՝ Քաղկեդոնի ժողովին շուրջն է։ Մեր մէջ Քաղկեդոնի ժողովը չի հիննար։ Բայց, յետ տասնչորս տասնհինգ դարու վիճաբանութեանց և հրատարակութեանց, դեռ կը գտնուին բազմաթիւ հայեր, որոնք որոշապէս չեն գիտեր—մինչև իսկ անորոշապէս ալ—թէ խնդիրը ինչի վրայ է։ Պարոնեան վարդապետին գիրքը անոնց համար օգտակար պիտի ըլլայ, եթէ ընթացիկ աշխարհաբարին վերածուի ու այս վերածման թերևս ալ ուրիշները ինքզինքնին ազատ համարեն նորէն այս խնդրով զբաղելու և հրատարակութիւններ ընելու պարտականութենէն։

Պարոնեանին հրատարակութիւնները ընդհանրապէս վիճաբանական են, ինչպէս այդ Քաղկեդոնեան հատորը։ Հեղինակ մը իր ընտրած նիւթերովը իր էութիւնը իսկ կը յայտնէ։ Սուքիաս վարդապետ Պարոնեան վիճաբանող մըն էր։ Չեմ ուզեր ըսել՝ կռուասէր մը։ Ո՛չ, շատ հանդարտ ու ազնիւ էր, բայց միայնը՝ ըմբոստ։ Ընդդիմախօս ծնած։ Ամեն ըմբոստամիտ՝ խորհող մըն է, իր ստացած դաստիարակութեան սահմանին մէջ։ Բնականաբար հայր Պարոնեան ըմբոստացողի յատկութիւնը պահեց, չէր կարող յարատևել վանական միաբանութեան մէջ։ Երեսունհինգ տարի առաջ, Հասունեան և Հակահասունեան խնդիրներուն միջոցին, ջերմ հակառակորդ հանդիսացած էր Հասունին և Հռովմի. Կուրիներու հանդարտելէն յետոյ, ձգեց ելաւ կաթոլիկ եկեղեցիէն [illegible] սուրբ Ղազարը, բայց, աւելի կանուխ Հռոմը յայտարարելով։

Ըմբոստը երևան եկաւ ուրիշ պարագաներու մէջ ալ։ Երկու երեք տարի առաջ, Լօնդոն անգլիական եկեղեցի մը գտնուելով, հաղորդուեցաւ Անկլիքան—բողոքական երէց մը։ Այս ապստամբութիւնը շատ վիճաբանութեանց տեղի տուաւ։ Պօլսոյ օրաթերթեան մէջ Պարոնեան վարդապետ ուզեց ինքզինքը արդարացնել, [illegible] վերջապէս քաղաքի ձեռնարկած զանազան բարեփոխութիւնները ինչ հետեւանքի են հասցրել: Ի հարկէ, ոչ:

Կովկասը վիճակագրութեան տեսակէտից առանձնայատուկ տեղն է բռնում Ռուսաստանում, իսկ Կովկասի քաղաքների մասին խօսելն անտեղի աւելորդ է, քանի որ նրա մայրաքաղաքը դեռ զուրկ է վիճակագրական բիւրօից: Միայն բացառութիւն է կազմում այդ հարցում Բագուն, որը այդ հիմնարկութիւնը արդէն ունի և ձեռնարկել է միօրեայ ժողովրդագրութիւն կազմելու:

Ե. Կարա-Մուրզա

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Anatolio Latino. Gli Arméni e Zeitun, seconda edizione con motte illustrazioni e due carte geografiche. Firenze. 1903.

Անատոլիօ Լատինօ. Հայաստան և Զէյթուն, երկրորդ հրատարակութիւն բազմաթիւ պատկերներով և երկու աշխարհագրական քարտէզով. Ֆլօրենցիա, 1903.

Այս իտալերէն աշխատութիւնը, որ հրատարակվեց 1897-ին, և որի մասին երկու տարի առաջ մենք մի համառօտ տեսութիւն ներկայացրինք «Մշակի» էջերում, նորերս լոյս է ընծայվել երկրորդ հրատարակութեամբ, պատկերազարդ և աւելի ճոխ ու նոր բովանդակութեամբ: Հեղինակը, որ ընտրել է Անատոլիօ Լատինօ ծածկանունը, ենթադրվում է լինել մի դիպլօմատ, որ շատ ծանօթ է Թիւրքիային: Ընդհանուր կարծիքն այն է, որ այդ դիպլօմատը պ. Վիտտօն է, Իտալիայի ընդհանուր հիւպատոսը Հալէպում, բայց ով և լինի նա, գործը ցոյց է տալիս, որ հեղինակը ոչ միայն հմուտ լեզուագէտ է, այլ և ընտիր պատմագէտ, իսկական գրող, բանաստեղծ և Մանինի ու Մաձձինայի դպրոցի մի ջերմ հայրենասէր: Այդ գործը կատարված է մեծ հմտութեամբ և առարկայի խորին ծանօթութեամբ:

Հռոմում հրատարակվող, Հելլենա-Լատին ընկերութեան օրգան «Cronache della Civilta Ellenzo-Latina» հանդէսի վերջին, հոկտեմբեր 15-ի համարը մի մեծ գրական տեսութիւն է նուիրել այդ խոշոր աշխատութեան,—տեսութիւնը հիմնված է պրոֆէսոր Մինոս Զերալի յօդուածի վրա—մենք էլ անտեղի չենք համարում ներկայացնել այդ տեսութիւնը մեր ընթերցողներին, իբրև արտասահմանեան գրականութեան մի նորութիւն:

«Առաջին հատորը, (գործը բաղկացած է երկու մեծ հատորներից)—ասում է «Cronache»—զարդարված է Հայաստանի և Կիլիկիայի քարտէզով և իբրև առաջաբան ունի մի գորովալի ձօն հեղինակի կեանքի ընկերուհուն, որ խրախուսել է գրել 700 էջ ի նպաստ մի ճնշված ժողովրդի: Իր երկար և ճարտար առաջաբանի մէջ, Անատոլիօ Լատինօ ջերմապէս պաշտպանում է հայկական դատը և արտայայտում է իր սէրը ազատված Իտալիայի համար:

«Առաջին գլուխը մեզ տալիս է մի բազմաբեղուն ուսումնասիրութիւն հին և ներկայ Հայաստանի աշխարհագրութեան, ֆլօրի և ֆաունի ու ազգաբանականութեան: Երկրորդ գլխի մէջ նա խօսում է Ասորեստանի և Բաբելօնի ունեցած յարաբերութիւնների մասին Արարատեան հին աշխարհի բնիկների հետ: Գիտնական իտալացին յայտնում է, որ մեծապէս օգտվել է Վենետիկի Մխիթարեանների հրատարակութիւններից և բոլոր արժանոյն գովասանքներ է կարդում այդ միաբանութեան, որ արտադրել է 1716-ից սկսած կարևոր երկասիրութիւնների մի ամբողջ խումբ: Նա վերջացնում է, յիշելով Ռընանի հետեւեալ խօսքերը.

«Արևելքի հին պատմութիւնը բացարձակապէս անստուգելական է և այն ժամանակ, երբ նա հասնում է որ և է ստուգութեան, Արևելքի քաղաքական պատմութիւնը դառնում է գրեթէ անտանելի: Ոչ մի բան հաւասար չէ այնքան արաբ և պարսիկ պատմաբանների տափակութեան, որոնք աւանդել են մեզ իսլամութեան պատմութիւնը: Ու դրա պատճառը, աւելի, իրան պատմութեան մէջն է, քան պատմաբանների: Անհեթեթ և արիւնախում բռնապետների քմահաճոյք, կառավարիչների ըմբոստութիւն, հարստութիւնների փոփոխութիւն, վեզիրների յաջորդութիւն, մարդկայնութեան կատարեալ բացակայութիւն, ոչ մի ձայն բնութեան, ժողովրդի ոչ մի իսկական և ինքնուրոյն ձայն:

Տասն և մէկերորդ գլուխը նուիրված է կրօնական խնդրին: Հեղինակը, ինքն լինելով կաթոլիկ, արտայայտում է յարգալից համակրութիւն հայոց եկեղեցուն: Ազգագրական մի ուսումնասիրութիւնից յետոյ հայերի, Թիւրքմէնների, քիւրդերի, չերքէզների և լազերի մասին, որոնց տիպական պատկերները զարդարում են հատորի վերջին մասը, Անատոլիօ Լատինօ խօսում է Բեռլինի դաշնագրի 61-րդ յօդուածի մասին: Յաջորդ գլուխը ներկայացնում է իսլամի ոգու և վարդապետութիւնների մի հմտալից ուսումնասիրութիւն: Շատ քիչ եւրօպացիներ մշակել են այդ առարկան այդպիսի հիանալի ձեռնհասութեամբ: Շատ լաւ տեսնվում է, որ հեղինակը հիմնովին գիտէ արաբերէնը, մանրազննին կերպով ուսումնասիրել է Ղուրանը և երկար ապրել է մահմեդական ժողովուրդների մէջ:

«Տասնեհինգերորդ և վերջին գլուխը վերջանում է Ռընանի այս խօսքերով:

«Ժամանակակից Արևելքը մի դիակ է. Արևելքը գաղափարականութիւն չէ ունեցել. այսօր նա նոյն չափ տհաս է ազատամիտ հաստատութիւնների համար, ինչպէս պատմութեան առաջին օրերում: Ասիան նախասահմանութիւն է ունեցել մի բանաստեղծական և հրաշալի մանկութիւն ունենալու և մեռնելու առնական հասունութիւնից առաջ»:

Երկրորդ հատորը ամբողջովին նուիրված է Զէյթունին: Առհասարակ ամբողջ գիրքը մի թանկագին գանձ է Արևելքի և Թիւրքիայի ուսումնասիրութեան համար»:

Հ. Առաքելեան

—

Նոր ստացված գրքեր. 1) Ադա Նեգրի Բանաստեղծութիւններ թարգմ. Ե. Յակոբեան Թիֆլիս 1903, գինն է 30 կոպէկ. 2) Պատուաւորներից մէկը, կօմեդիա Բրակկօյի, հրատարակութիւն «Աղբիւր-Տարազի», փոխադրութիւն Զալալեանի Թիֆլիս 1903 գինն է 15 կոպէկ. 3) Երեխաների սնունդը, Դօկտոր Կ. Փոչալեանի, Ալէքսանդրօպօլ 1903 գինն է 50 կոպէկ. 4) Լոյս հասարակական օրացոյց, 1904 թւի 12 պատկերով և ընդարձակ յաւելուածով, խմբագրեց Ե. Թոփչեան, Թիֆլիս 1903 գինն է 50 կոպէկ. 5) Լոյս գրպանի օրացոյց 1904 թւի 17 պատկերով և յաւելուածով. գինն է 20 կոպէկ. 6) «Армянскіе Аршакиды» Г. Халатьянцъ, опытъ критики историковъ. Москва, 1903 Թ. գինն է 3 րուբլի:

ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ՄԻՕՐԵԱՅ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

(Նամակ Բագուից)

—

Ես կանգ առայ, կարծեմ, ամսի 16-ի առաւօտեան գործունէութեան վրա: Այդ օրը մենք պէտք է գրէինք հասարակաց տները, որոնք մեր բաժնումն են, բայց որովհետև մինչև ժամը 12-ը այնտեղ գնալ չէր կարելի՝ այնտեղի բնակիչների քնած լինելու պատճառով՝ մենք այցելեցինք մեր բաժինը—իմանալու համար թէ ինչ հալի են վիճակագրողները:

Առաջին օրը ազգաբնակութիւնը թշնամաբար էր վերաբերվում, կամ տեղեկութիւններ չէր տալիս, կամ թէ չէ տալիս էր, բայց սխալ տալիս: Այդ դժուարութիւնը հետեւեալ օրվանից վերանում էր, ազգաբնակութիւնը կակղում էր և պատահում էին դէպքեր, երբ իրանք էին շտապեցնում, խնդրում, որ գրեն նրանց: Բայց հէնց այդ օրերը, թարթի նման, քաղաքային վարչութիւնը սկսում է բաժանել իր տուրքեր ժողովելու թղթերը և ազգաբնակութիւնը նորից յուզվում է. երա որ ասում էին՝ մեզ գրում էք մեզնից հարկեր առնելու համար: Նրանք իրանց ձեռքին փաստ ունէին: Ահագին ջանքեր հարկաւոր եղան համոզելու, հաւատացնելու համար, թէ մեր գործը կապ չունի այդ թղթերի հետ, ինչպէս և այդ դժբաղդ թղթերը մեր գործի հետ: Այդ բանում նրանց հաւատացնելու համար մենք առաջարկում էինք նրանց անունները կամ բոլորովին չասել, կամ թէ չէ կեղծ անուններ տալ,—այդ բանը մեզ համար նշանակութիւն չունէր,—միայն թէ միւս տեղեկութիւնները ճիշդ տան: Մեր ընտրած միջոցը այնպէս ազդեց նրանց վրա, որ շատ քչերը համաձայնեցին կեղծել, իսկ այդ քչերից մի քանիսն էլ 1—2 ժամից յետոյ մեզ գտան և ասացին իրանց իսկական անունը...

Ես երբէք չեմ կասկածել խուլար ամբոխի անկեղծութեան և դիւրահաւատութեան մասին. նա հաւատաց մեզ ոչ թէ գիտակցօրէն, այլ հաւատաց, որովհետև սովոր է հաւատալ և նա պատրաստ է միշտ հաւատալ, միշտ լսել քեզ—միայն թէ ի չարը չը գործադրվի այդ հաւատը: Ես խորը համոզված էի, որ այս դէպքում ոչ մի կերպ նրանց հաւատը վտանգի չէ մատնվելու, ուստի հանգիստ և գոհ սրտով առաջ գնացի:

Ամենից շատ դժուարութիւններին վիճակագրողները հանդիպում էին, ինչ խօսք, մահմեդական դասակարգի մէջ: Երբեմն հրաժարվում էին կանանց անունները կամ տարիքը յայտնելուց, սենեակները որոշելուց և այլն: Կային և այնպիսիները, որոնք այդ «գրելուց» վախենալով, իրանց ունեցած չունեցածը հաւաքել էին բնակարանի խուլ և յետ ընկած սենեակներից մէկում և վիճակագրողներին ցոյց էին տալիս դատարկ սենեակները իրանց մերկ պատերով. Սակայն այդպիսի երեւոյթները յաճախակի կրկնվողներից չէին և դրանց հերոսներին էլ էր կարելի լինում համոզել: Ամբոխը իր հասկացողութեամբ, ինքնաբնազդներով, դիւրահաւատութեամբ ամեն տեղ մի և նոյն է:

Ռ. Յովհաննիսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Բիւլլետէն Կովկասեան Կառավարչապետ գեներալ-ադիւտանտ իշխան Գրիգորի Սերգէեվիչ Գոլիցինի առողջական դրութեան մասին. «Վերջին չորս օրվայ ընթացքում նորին պայծառափայլութեան ջերմութեան աստիճանը տատանվում էր բնական սահմաններում: Ինքնազգացութիւնը և ընդհանուր դրութիւնը լաւ են: Վէրքերը մաքրվել են և լաւանում են կանոնաւոր կերպով: Մալինին, Զուդնովսկի, Բուդենկօ, Գաղոմսկի: Հոկտեմբերի 24-ին, երեկոյեան 8 ժամին»:

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ շուտով Պետերբուրգում, գիտութիւնների ակադէմիային կից, կը բացվի ազգագրական թանգարան, որի մէջ ժողովված կը լինեն պետութեան մէջ ապրող բոլոր ցեղերի ազգագրութեան վերաբերեալ իրեղէններ և նիւթեր: Թանգարանը կը կրէ Պետրոս Մեծի անունը:

—

Ա. Մանթաշեան, որ 50,000 րուբլի է նուիրել Թիֆլիսի վաճառականների հասարակութեան՝ առեւտրական աստիճանակարգ ուսումնարան բանալու համար, մօտ օրերումս մտցրեց այդ գումարը վաճառականների դրամարկղը:

—

Թիֆլիսի արհեստաւորների ուստը ներկայացրել է քաղաքային վարչութեան մի առաջարկութիւն, որով խնդրում է միջնորդութիւն յարուցանել կառավարութեան առաջ՝ զինուորագրական արտօնութիւններ տալու այն անձերին, որոնք իրանց ուսման ընթացքը աւարտում են Թիֆլիսի արհեստաւորաց ուսումնարանում:

—

կրօնն, ու ոչխարներն ալ շատ խորհող արարածներ չեն համարուիր:

Ազարեան պատրիարք, որ Գրիգորիս եպիսկոպոսէն մը այլապէս զարգացեալ մաքով օժտուած էր, անհատապէս թերևս շատ անկախօրէն մտածող մը ըլլար, բայց իբր հանրային պաշտօնեայ իր պարտականութեանց խորին գիտակցութիւնը ունէր: Օր մը, 1903-ին, որոշուեցաւ, որ Մխիթարեան վարդապետ մը հայկաբանութեան դասախօսի պաշտօնին կոչուի Կ. Պոլսոյ կենտրոնական վարժարանին մէջ: Ատենին պատրիարքը՝ Աշըգեան Խորէն եպիսկոպոսն էր: Յաղթանակ մը կրօնական ազատամտութեան: Բայց ահա Ազարեան պատրիարք չուզեց կաթոլիկ վարդապետ մը արտօնել լուսաւորչական հայոց վարժարան մը դասախօսելու:

Իմ վարդապետս հայոց ժամուն բակէն պիտի անցնի դպրոց մտնելու համար, կըսէր. եթէ դպրոցը փողոցի վրա դուռ մը ունենար, խնդիրը կրնար փոխուիլ: Բայց այդ դուռը չը կայ, ու կաթոլիկ վարդապետ մը լուսաւորչական ժամու մը դռնէն ներս պիտի մտնէ դպրոց երթալու համար: Ժողովուրդը վարդապետին ետևէն կը նայի: Ժողովուրդը՝ ժամուն դուռը կը տեսնէ միայն. երբ իր վարդապետը հոնկէ ներս կը մտնէ, ինքն ալ անոր ետևէն կը մտնէ: Ժողովուրդը հօտ է, ոչխար է, շատ չի մտածեր:

Ու ատենօք լուսաւորչական հայերն ալ Ազարեանին չափ զգուշաւոր էին. ըսեմ՝ աւելի բըծախնդիր զգուշաւորներ: Փորձը Պարոնեան Սուքիաս վարդապետին վրա կատարուեցաւ անգամ մը: Երբ դեռ Մխիթարեան վարդապետ մըն էր, 1872—73-ին միջոցները, հայեվարի դասախօսութեան հրաւիրուեցաւ Խասգիւղի Ներսէս-Շահնազարեան վարժարանը, որուն վերին տեսուչը Վարժապետեան Ներսէս եպիսկոպոսն էր. լուսաւորչական մամուլին մէկ մասը խեղճ մարդը վարժարանին դռնէն դուրս նետել տալու անհրաժեշտ աղմուկով, վասն զի կաթոլիկ վարդապետ մըն էր: «Պիւրիւնճիւկը հայ դպրոցի մը սեմէն ներս չի կրնար երևիլ» կը գրէր Խաչատուրեան իր «Օրագիր»-ին մէջ: «Պիւրիւնճիւկ»ը այն սև քօղն է, որով կաթոլիկ հայ վարդապետները իրենց փակեղը կը ծածկեն: Անցան տարիներ, և 1888—89-ին մեր կրօնական ժողովը կը որոշէր լուսաւորչական վարժարաններէն արտաքսել ոչ միայն պիւրիւնճիւկաւոր կաթոլիկները, այլ և նոյն իսկ ֆէսաւոր աշխարհական կաթոլիկները:

Մամուլին միջոցաւ ծանր բողոքներ արձակեցինք այս երկշոտ գաղափարներուն դէմ: Ու ահա երեք չորս տարի ետքը, պիւրիւնճիւկաւոր մը կը հրաւիրուէր, հայոց ժամէն անցնելով, մտնել հայ դպրոց մը, որ «եկեղեցին շարունակութիւնն է»: «Հիմակ ալ անտէրն էր որ երկշոտ գաղափարները կահաբեկէին Սագըզ-Աղաճի պատրիարքարանը: Դաւանանք, սկըզբունք, ինքնապաշտպանութիւն, ամէնքն ալ կեանքի քառուղիի մը պարերգը: Անդադրում տեղափոխութիւն մը, բոլոր պահանջման կեանքի պարէն:

Ես մէկէն, դուք քովէն
Անցնինք դիմաց փոխենք տեղերնիս
Նոյն կարգաւ, դարձեալ...

Սուքիաս վարդապետ քաղաքական կեանքին մէջ ալ պէտք տեսաւ երբեմն երբեմն գիրք փոխելու, երբ հեռուէն ուրիշ-տեսակ երաժշտութիւն մը կը լսէր, ու նուագը՝ Թրքական եաթաղաններու շաչիւնն էր: Դեռ շատ չըներ, որ ծերունի վարդապետը ծանր հարուածներ կրեց Բաբիկի հայկական մատրան մէջ. սաղաւարտը գլխէն առին, զինքը զգեստներէն մերկացուցին, ու մօրուքը քաշկռտեցին, վասն զի սուլթանին հանդէպ «խոհեմ ու զգուշաւոր քաղաքականութեան» քարոզիչն էր եղած, անոր մէկ տարեդարձին առթիւ:

Այս դէպքը ինծի յիշեցուց հին Սուքիաս վարդապետ Պարոնեանը, երբ Մանչէսթրի հայոց առաջնորդն էր: Այդ ժամանակները, 1888-ին, Կ. Պոլսոյ պատրիարքարանը Եղիշէ վարդապետ Դուրեանը պատգամաւոր կը ղրկէր Եւրոպա, հանդարտեցնելու համար հայ մտքերը, որոնք սկսած էին ամեն կողմ յուզուիլ, արտասահման հրատարակուիլ սկսած թերթերու նախաձեռնութեամբ: Սուքիաս վարդապետ Պարոնեան այդ յուզումը արդարացնող տեղեկագիր մը խրկեց պատրիարքարան: Պատմական տեսութիւն մը կըներ 1856-էն սկսեալ մինչև այն օրուան դէպքերուն, և ցոյց կու տար, թէ յուսահատութեան մղուած ժողովուրդ մը չէր կրնար չի յուզուիլ: Մանչէսթրի հայոց առաջնորդը չէր կրցած նախատեսել թէ թեթև հովը, որ կը փչէր, կրնար [illegible] փոթորիկ մը ազդարարը ըլլալ: Ալեկոծութեան պահուն, նաւաբեկութեան երկիւղէն խռովեցաւ, տակն ու վրա եղաւ: Վախցողը մինակ ինքը չէր:

Պարոնեան վարդապետ Լոնդոն վախճանեցաւ, վիրաբուժական գործողութենէ մը յետոյ, ու կը հանգչի Մանչէսթր իր սիրած ժողովուրդին մէջ: Քանի մը ամսէն պիտի բոլորէր իր քահանայական ձեռնադրութեան յիսնամեակը: Իր գաղափարակիցներն եղած էին Մխիթարեանց այժմու Աբբան, և Նոր-Պէյ Խորէն եպիսկոպոսը ու Ճերմակեան Մեսրոպ վարդապետը, երբեմն Բագուի «Համբաւաբեր» քարոզիչը, որ այս տարի Պոլիս մեռաւ: Հայր Մեսրոպը՝ Տէր Մեսրոպ եղած էր, ու Տէր Մեսրոպը՝ նորէն Հայր Մեսրոպ:

Սուքիաս վարդապետ Պարոնեանի ընդարձակ կենսագրականը գրողներ պիտի գտնուին: Անշուշտ պիտի չը մոռցուի, թէ բարի ու ազնիւ մարդ մը եղաւ: Իր տեսակին մէջ եզական մը բարեսրտութեան ու ազնուամտութեան կողմէն: Օր մը իր բոլոր խնայողութիւնը, մօտաւորապէս 4,000 րուբլի, կովկասցի պատանիի մը Անգլիոյ մէջ զարգացմանը նուիրեց: Պատանին յետոյ երիտասարդ եղաւ, ուսմունքը արդարացուցած էր իր վրա դրուած յոյսերը. անցաւ Կովկաս, սկսաւ աշխատիլ և իր պարտքը՝ որքան նիւթական այնքան ալ բարոյական՝ վճարելու վրա էր, երբ մահը վրա հասաւ: Պարոնեան երբեմն դարձեալ իր բոլոր խնայողութիւնները նուիրեց հայ երիտասարդի մը արուեստագէտի զարգացումը դիւրացնելու: Խորհրդապաշտ հայասէր ու մարդասէր էր այդ ծերունին: Իր ազնիւ գործերը բարեկամական անգաղտնապահութեամբ իմացուցին: Ստացած տեղեկութիւններուս համեմատ, ուրիշներուն դրամական աջակցութեանը կարօտ վիճակի մէջ մեռած էր: Ան ինչ որ «բարի վախճան մը» կրնայ կոչուիլ, գոնէ ամուրի եկեղեցականներուն համար:

⁂

Վերջին երեք տարիների ընթացքում Անդրկովկասում ծախսված են հետևեալ գումարները այն միջոցների վրա, որոնք կառավարութեան կողմից ձեռք են առնված կենդանիների ժանտախտի դէմ.—1901 թւին ծախսված է 951,825 րուբլի, որից Զուրնաբադի կայարանի վրա—40,514 րուբլի, 1902 թւին՝ 1,054,432 րուբլի, որից Զուրնաբադի կայարանի վրա—95,559 րուբլի, ներկայ 1903 թւին՝ 830,000 րուբլի, և այս գումարից Զուրնաբադի կայարանի կարիքները հոգալու համար—120,218 ր.: Հակաժանտախտային պատուաստները կատարվում են Անդրկովկասում անընդհատ Զուրնաբադի կայարանի բացումից յետոյ և համարեա այն բոլոր տեղերում, ուր այդ հիւանդութիւնը բուն էր դրել. Հակաժանտախտային պատուաստներ չեն կատարվում միայն այնպիսի դէպքերում, ուր հեշտութեամբ կարելի է մաքառել ժանտախտի դէմ՝ սպանելով վարակված անասուններին և կամ ուր շատ դժուար է տանել պատուաստ շիճուկ: Այս տարվայ յունիս ամսից սկսած մինչև նոյեմբեր ամիսը, ուրեմն չորս ամսի ընթացքում միայն, Զուրնաբադի կայարանից ուղարկված է Անդրկովկասի զանազան նահանգներն ու շրջանները մօտ 8,300 լիտր շիճուկ, որ կազմում է 150,000 արջառի համար բաւարար քանակութիւն:

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են. «Երէկ վերջացաւ գաւառիս II մասի նորակոչ զինւորների վիճակահանութիւնը: Պարոն գաւառապետի խելացի և համակրելի կարգադրութեան շնորհիւ այս տարի վիճակահանութեան ժամանակ ժողովուրդը ազատվեց միանգամայն աւելորդ ու վնասակար ծախքերից: Ամեն տարի առաւօտ վաղ, դեռ վիճակահանութիւնը չսկսված, ժողովուրդն արդէն հաւաքած էր լինում, բայց վայ այն գիւղացուն, որի որդին ազատվում էր վիճակից, իսկոյն հրհրելով քշում էին մէյխանն ու Աստուած խնայէ, թէ ինչպէս չորս կողմից թալանում էին խեղճ գիւղացուն: Բայց այս տարի պ. գաւառապետի կարգադրութեամբ բոլոր մէյխանները փակ էին առաւօտից մինչև ժամի 4-ը, երբ արդէն վերջացած էր լինում վիճակահանութիւնը և գիւղացիք շտապում էին մօտիկ գիւղերը գիշերելու: Զինւորութեան ընդունվեցին 107 տղայ, որ երեկ երգելով, ամսիս 28-ին ճանապարհ կընկնեն Ախալցխա»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԵՌԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

Ռուսաստանը յետ է նահանջում. Սեպտեմբերի 28-ին, ինչպէս հաղորդում են ռուսաց «Новое Вр.» և «Москов. Вѣд.» լրագիրները, Ռուսաստանը պաշտօնապէս յանձնել է Չինաստանի ներկայացուցիչներին Մանջուրիայի Շանխայ-Գուանի ամրոցը իր բոլոր շինութիւններով և ամրութիւններով. Ամրոցը մանրամասնօրէն դիտելուց և նկարագրելուց յետոյ ժամը 12-ին և 20 րոպէին կախել են յանձնման պաշտօնական թուղթը, իսկ 15 րոպէից յետոյ ամրոցի վրա ռուսական դրօշակի տեղ ծածանվել է չինական դրօշակ:

Ինչպէս երևում է Ռուսաստանի այդ առաջին զիջումը մեծ տպաւորութիւն է թողել տեղական ազգաբնակութեան վրա:

—Ռուսաստանը յետ է նահանջում,—ահա այդ լուրն է պտտվում ժողովրդի բերանում:

Դեռ այդ գործողութիւնը կատարվելուց մի քանի օր առաջ, աւելացնում է «Нов. Вр.»-ն, ճապոնացիները ամենքին հաւատացնել էին աշխատում, թէ իրանք արդէն վախեցրել են Ռուսաստանին, թէ անպատճառ ստիպելու են ռուսներին հեռանալ Մանջուրիայից: Ռուս լրագիրը զայրոյթ է արտայայտում այդ առիթով, նկատելով որ Ռուսաստանի վարմունքը «մեծահոգութեան» հետևանք է և ոչ «թուլութեան», այսինքն Ռուսաստանը մեծահոգութիւնից դրդված է յանձնել մանջուրական յիշեալ ամրոցը:

—

Ճապոնացիները անշնորհք են. Եւրոպական լեզուներով լոյս տեսած մի շարք ուսումնասիրութիւններ, վիճակագրական տեղեկութիւններ ու լրագրական յօդուածներ անհերքելի կերպով ցոյց են տալիս, թէ ճապոնական ազգը վերջին ժամանակներս հսկայական քայլերով առաջադիմել է և բարւոքել է իր անտեսական կուլտուրական կեանքը: Բայց դրա հակառակ «Новости» լրագիրը «Indép. Belge»-ի մի քանի տեղեկութիւնների վրա հիմնուելով, յայտնում է, թէ ճապօնացիները անշնորհք են, թէ նրանք անկարող եղան իրանց գաղթականական գործերը կարգաւորել Ֆորմօզա կղզու վրա, թէ նրանք Կորէայում հաստատվելու դէպքում էլ միայն վնասել կարող են կորէացիներին, ձեռք մեկնելով երկրի իշխանաւորների վրա, թէ ճապոնացիներին կարելի է թոյլ տալ Կորէա գաղթել միայն այն պայմանով, որ նրանց վրա հսկողութիւն լինի:

—

Ճապոնական ծերակոյտը. Փոքրիկ պետութիւն է Ճապոնիան, բայց ուժեղ և զինված իր կազմութեամբ, իր անտեսական-ռազմական կեանքով: Նա ունի նոյն իսկ այնպիսի կուլտուրական հիմնարկութիւններ և կազմակերպութիւններ, որոնցից զուրկ է Եւրոպան: Այդպիսի կազմակերպութիւնների շարքին է պատկանում և ծերակոյտը: «Morning Post» լրագրի ասելով, Տօկիօում գոյութիւն ունի ճապոնական նշանաւոր ծերունիների մի կօմիտէ, որը հարկաւոր դէպքերում իր կարծիքները յայտնում է հայրենիքի ընթացիկ գործերի մասին: Այդ կօմիտէի անդամները այնպիսի մարդիկ են, որոնք մի ժամանակ քաղաքական նշանաւոր դեր են խաղացել, իսկ այժմ ծերութեան պատճառով հեռացել են ասպարէզից: Պարզ է, որ Ռուսաստանի ու Ճապոնիայի ներկայ լարված դրութիւնը չէր կարող վրիպել ծերակոյտի ուշադրութիւնից: Նա ուսումնասիրում է վիճելի հարցերը, որպէս զի իր վերջնական եզրակացութիւնն յայտնէ կառավարութեանը: Վերջին օրերս այդ ծերակոյտի անդամ է դարձել նաև մարկիզ Իտօն: Առհասարակ ճապոնական «ծերունիների» խորհրդակցութիւնն ու եզրակացութիւնը մեծ ազդեցութիւն կարող է ունենալ իրերի այժմեան ընթացքի վրա:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Новости» լրագրին գրում են Պարիզից. «Ալկոհօլն և գինին Ֆրանսիայի համար ծառայում են որպէս աղբիւր ոչ միայն հարստութեան, այլ նաև ազգային զարհուրելի թշուառութեան: Ալկոհօլիզմը սպառնում է Ֆրանսիայում հետըհետէ աւելի մեծ չափեր և լուրջ կերպով վտանգ է սպառնում հասարակական առողջութեան: Վախեցած հասարակութիւնը, նախատեսելով ճակատագրական-անխուսափելի վրէժառութիւնը, ելք է որոնում: Ֆրանսիայում գոյութիւն ունի այժմ ընկերութիւնների և միութիւնների մի ամբողջ շարք, որոնց նպատակն է մաքառել ալկոհօլական այդ մեծ չարիքի դէմ. «Սպիտակ խաչ», «Կապոյտ խաչ», «Հակաալկոհօլիկների միութիւն», «Համալսարանական աստղ» և այլ անուններ կրող ընկերութիւնները զանազան տեղերում աշխատում են նոյն ուղղութեամբ: Դժբախտաբար, նրանց ջանքերը ոչ միշտ արդիւնաւէտ են լինում: Այդ բոլոր ընկերութիւնների անդամների թիւը հազիւ հասնում է 50,000-ի: Կամենալով միանալ և կազմել մի մեծ, համազգային ընկերութիւն՝ ֆրանսիական հակաալկոհօլական բոլոր ընկերութիւնները հրաւիրել են մի կօնգրէս, որի նիստերը այժմ տեղի են ունենում Պարիզում: Կօնգրէսին նախագահում է հանրապետութեան նախկին նախագահ Կազիմիր Պերիէ»:

—Ֆրանսիական լրագիրները հաղորդում են, որ արտաքին գործերի մինիստր Դէլկասէ իր խօսակցութեան մէջ կոմս Լամզդորֆի հետ մանրամասնաբար բացատրեց այն պատճառները, որոնցով նա հրաժարվեց գերմանական դրամատէրերի խմբի կողմից նրան առաջարկված վերջին նախագծից՝ Բաղդադի երկաթուղու շինութեան վերաբերմամբ: Հաւաստիացնում են, որ Դէլկասէ մտադիր է բոլորովին անպայման հրաժարվել որ և է նախագծից, եթէ ֆրանսիական դրամատէրերի ներկայացուցիչներին չի տրվի ղեկավարող դեր այդպիսի ձեռնարկութեան խորհրդի մէջ: Այժմեան ծրագրով խորհրդի նախագահ պէտք է լինի գերմանական դրամատէրերի ներկայացուցիչը, իսկ Դէլկասէի պահանջով Ֆրանսիան պէտք է հաւասար իրաւունք ունենայ Գերմանիայի հետ, որովհետև ֆրանսիական դրամատէրի վճարելիք գումարը հաւասար է գերմանական դրամատէրերի գումարին: Ինչպէս յայտնի է, բանակցութիւնների սկզբում Դէլկասէ պահանջեց, որ Ռուսաստանն էլ մասնակցէ ձեռնարկութեանը, սակայն, ինչպէս հաղորդում են, Ռուսաստանը վերջի վերջոյ հրաժարվեց որ և է մասնակցութիւն ունենալու մտադրութիւնից Բաղդադի երկաթուղու կառուցման մէջ:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ՄԱՆՐԱՆԿԱՐ

Մի անգամ ես ճանապարհորդում էի մի պարոնի հետ պօստային սայլակով: Ուղեկիցս ջղային մարդ էր, դիւրագրգիռ, շատ ոգևորվող, բայց և շատ յուսահատվող: Նա սիրում էր գովել իր խելքը, իր ոյժը և իր համարձակութիւնը, երբ առողջ էր գնում բանը: Նա այդ առողջութիւնը իրան էր վերագրում: Սակայն երբ ձախորդութեան էինք հանդիպում, այն ժամանակ մեղաւորը դուրս էի գալիս ես:

Երեկոյ էր, երբ մենք հասանք մի կայարան:

—Գնանք առաջ, թէ մնանք և գիշերենք, հարցրինք մենք միմեանց:

Խորհրդակցելուց յետոյ վճռեցինք գնալ:

Շուտով դուրս եկաւ լուսինը և բացեց մեր առաջ չքնաղ տեսարաններ:

—Տեսնք բացականչեց ուղեկիցս, որքան լաւ եղաւ, որ դուք ինձ լսեցիք և մենք շարունակեցինք ճանապարհը:

—Այո, նկատեցի ես, հրաշալի գիշեր է:

Արեգակը չէ այրում, վրա բերեց ուղեկիցս, և ուրեմն հարկաւոր չէ հովանոց պահել ձեռքներիս: Ոչ, ես շատ ուրախ եմ, որ այդպէս ճանապարհորդութիւնը շարունակեցինք: Եթէ ձեզ նայած լինէի՝ դուք անպատճառ կը մնայիք գիշերելու, իսկ այժմ մենք արդէն մի ամբողջ արշաւ անցած կը լինենք գիշերը և հետևեալ կայարանից էլ դուրս կըգանք հանգստացած ձիերով:

—Լաւ եղաւ, մրմնջացի ես. միայն թէ շուտ հասնենք:

Ճանապարհը երկար էր: Շուտով մենք սկըսեցինք յոգնութիւն զգալ: Գիշերվայ զովութիւնը սկսեց թմրեցնել մեզ: Իսկ մենք պէտք է աշխատէինք արթուն և զգաստ լինել, թէ այն պատճառով, որ երբեմն հանդիպում էինք ուրիշ սայլերի և թէ այն, որ մենք մտանք անտառի մէջ, ուր մութն էր և ճանապարհը քարքարոտ:

Ուղեկիցս սկսեց տրտնջալ:

—Ճանապարհը սկսում է ձանձրացնել, գանգատվեց նա:

—Դիմանանք, շուտով վերջ կը լինի:

Սայլակը մի տեղ թեքվեց և քիչ մնաց շուռ գար:

—Մի թէ այսպիսի ժամանակ կարելի է ճանապարհորդել, զայրացած խօսեց ուղեկիցս:

—Շուտով անտառից դուրս կը գանք, հանգստացրի ես:

Ուղեկիցս լռեց, բայց երբ հասանք մի կամուրջի, որով պէտք է անցնէինք, այդտեղ նա կատաղեց: Կառապանը առաջարկեց քշել սայլակը ուղիղ գետակի միջով:

—Ջուրը շատ չէ, բացատրեց կառավարը, վնաս չի լինիլ և դուք չէք թրջվի:

Ուղեկիցս յիշոց տուեց և իջաւ սայլակից:

—Ես կը գնամ կամուրջով, յայտնեց նա, իսկ սայլակը թող անցնի գետակով:

Ես էլ իջայ:

Կամուրջը անցնելուց յետոյ նորից նստեցինք: Ուղեկիցս բարկացած էր:

—Մի կէս ժամից յետոյ, նկատեցի ես, մենք կայարանում կը լինենք:

—Իժս ինձ հասաւ, խօսք կտրեց ուղեկիցս: Սա ինչ խայտառակութիւն է: Դուք էք մեղաւոր, դուք:

Նա փոքր ինչ լռեց և յետոյ շարունակեց:

—Դուք էք մեղաւոր, դիմեց նա ինձ: Դուք լաւ ծանօթ էիք ճանապարհներին. ինչու էիք ուրեմն դրդում, որ մենք շարունակէինք ճանապարհը, մի թէ չէինք կարող մնալ գիշերը այն կայարանում և լաւ հանգստանալ, մանաւանդ որ գեղեցիկ սենեակներ կային այնտեղ, իսկ առաւօտը վաղ ճանապարհ կընկնէինք դեռ լոյսը չը բացված:

—Բայց մենք խորհրդակցեցինք, նկատեցի ես, ծանր ու թեթև արինք և յետոյ վճռեցինք մեր գնալը:

—Ես ամենևին ծանր ու թեթև չարի, բացականչեց ուղեկիցս, ես հաւատ ընծայեցի ձեր փորձառութեանը: Դուք էք մեղաւորը:

Շուտով անտառը վերջացաւ և մենք նորից լուսնի լոյսի մէջ ընկանք: Կայարանը մօտ էր, մեր տրամադրութիւնը սկսեց լաւանալ: Մենք զբօսվեցինք շրջակայքով և աննկատելի կերպով հասանք կայարան:

—Ձէ, բացականչեց ժպտալով ուղեկիցս, լաւ եղաւ, որ ճանապարհ ընկանք: Այստեղ լաւ կը քնենք և յետոյ առաջ ու առաջ: Ձէ, ես չեմ փոշմանում, որ առաջարկեցի այստեղ գալ: այժմ ես պատրաստ եմ դարձեալ մի արշաւ առաջ գնալու:

Ճանապարհորդութեան շարունակութեան ժամանակ էլ իմ ուղեկիցը փոխում էր իր տրամադրութիւնը և աջողութիւնը գլխովին վերագրում էր իրան, իր խելքին և կամքի ոյժին, իսկ անաջողութիւնները ուղարկում էր իմ հասցէին:

—

Կեանքի մէջ յաճախ յիշում եմ այդ իմ ուղեկցին:

Այն մարդիկ, որոնց հետ միասին գործել ենք և չար ու բարի օրեր տեսել, ոգևորվել են տեսնելով գործի աջողութիւնը և բեղմնաւորութիւնը: Նրանք շատ բարձր տեղ և գին են տուել իրանց մասնակցութեանը, իրանց ջանքերին և աշխատանքին, իսկ երբ հասել են ձախորդութեան օրեր, այն ժամանակ՝ նրանք դուրս են եկել անպարտ, իսկ մեղաւորը մնացել ենք ես կամ մի քանի մօտ ընկերներս:

—Մի մխիթարութիւն ունէք դուք, ասաց ինձ իմ բարեկամ Խաչիկեանը, երբ պատմեցի նոր մեղադրանքների մասին:

—Ինչ մխիթարութիւն:

—Այն, բացատրեց Խաչիկեանը, որ այսօր գոնէ ձեզ յանձնում են այն դերը, որը ուրիշ ժամանակ զլանում էին իրանց ձեռքից բաց թողնելու և ձեր ու իրանց մէջ բաժանելու:

Խաչիկեանը սկսեց պատմել իր մի ազգականուհու մասին, որ չափազանց ջղային էր:

—Երբ որ եղանակը ամպոտ է լինում, ասաց Խաչիկեանը, ազգականուհու ջղերը սաստիկ գրգռվում են և նա մի գլուխ մեզ յիշոց է տալիս:

—Դուք ինչ մեղաւոր էք:

—Այո, մեղաւոր չենք, բայց ջղային մարդուն բան հասկացնել դժուար է լինում: Մենք ամեն կերպ աշխատում ենք նրան հանգստացնել, բայց նա մեր ամեն մի քայլից, ամեն մի հնարից աւելի ու աւելի է գրգռվում:

—Դժուար է:

—Սակայն դրա փոխարէն, եզրափակեց Խաչիկեանը, երբ ջղերը հանգստանում են, այն ժամանակ մենք դառնում ենք աչքի լոյսեր, սիրելիներ և սրտի հատորներ նրա համար:

—

Ես մի նամակ ստացայ Պարսկաստանից, որի բովանդակութիւնը ջղային մարդու գրուածքի տպաւորութիւն թողեց ինձ վրա:

Այդ նամակի մասին մի ուրիշ անգամ:

Վրժին

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

24 նոյեմբերի

ՕՐԷՆԲՈՒՐԳ. Այսօր հանդիսաւոր կերպով բացվեց Օրէնբուրգի գիւղատնտեսական ընկերութիւնը: Խորհրդի կազմի մէջ մտան երկրագործներ, գիւղատնտեսներ և հիմնարկութիւնների ներկայացուցիչներ:

ԿԵԼՑԷ. Թոյլատրված է այստեղ բանալ 7 դասարանեան առևտրական դպրոց:

ՊԱՐԻԶ. Վճռաբեկ պալատը մերժեց Թերեզա և Ֆրեդերիկ Ըմբերների գանգատը:

ՎԱՇԻՆԳՏՕՆ. Պետական դեպարտամենտը Պանամայի նոր կառավարութիւնից ստացաւ հեռագիր, որ ձևական կերպով տեղեկացնում է իր հիմնարկութեան մասին: Ասում են, որ պետական դեպարտամենտը պաշտօնապէս ընդունում է այդ կառավարութեան գոյութիւնը, եթէ նա կարողանայ պահպանվել և կարգը պահպանել:

ՎԻԵՆՆԱ. Բ. Դրան պատասխան—յայտագիրը այստեղի քաղաքական շրջաններում մեծ զայրոյթ առաջացրեց, որովհետև նա գրեթէ բոլորովին անուշադիր է թողել Միւրցշտեգում կայացած համաձայնութիւնը:

25 նոյեմբերի

ՊՈՐՏ-ԱՐԹՈՒՐ. Պեկինից հաղորդում են, որ դուցէ Սիւանֆուն դառնայ կայսերական մայրաքաղաք, եթէ Պեկինը թողվի արտասահմանեան առևտրի համար: Տուշեուխանը նորից յայտնվել է Մոնղոլիայում և թալանում է խաղաղ բնակիչներին: Ուղարկված են չինական զօրքեր: Հոկտեմբերի 19-ին չինական երկաթուղու Պուլանդեան կայարանի մօտից անցաւ խունխուզների լաւ զինւորված մի խումբ՝ թւով մօտաւորապէս 200 հոգի, և թալանեց չինական մի քանի գիւղեր առանց ձեռք տալու ռուսական գիւղերին:

ՎԻԼԴՊԱՐԿ. Գերմանական կայսրը ժամանեց նոյեմբերի 24-ին, առաւօտեան ժամը 10-ին: Պոտսդամում նրան դիմաւորեց կայսրուհին:

Կ. ՊՕԼԻՍ. Բ. Դրան պատասխանը բարենորոգումների վերաբերեալ յայտագրին յայտնում է, որ ժանդարմերիայի վերակազմութեան մասնաժողովի մէջ մտնում են գերմանական [illegible] Աւստրիայի և Ռուսաստանի [illegible]: Այդ [illegible] սահմանափակւում է [illegible] դատարանների վրա, որոնք կազմված են զօրքի կատարած բռնութիւնների գործը քննելու համար: [illegible] երեք վիլայէթների վալիները և [illegible] պաշտօնեաները [illegible]

ՎԱՇԻՆԳՏՕՆ. Միացեալ Նահանգների կառավարութիւնը ընդունեց Պանամայի կառավարութեան գոյութիւնը և յանձնարարեց Բոգոտայի ամերիկեան դեսպանին այդ մասին յայտնել Կոլումբիայի կառավարութեան: Պանամայում գտնված փոխ-հիւպատոսին էլ առաջարկված է այդ բանը հաղորդել Պանամայի կառավարութեանը:

Կ. ՊՕԼԻՍ. Անգլիան Բ. Դրան առաջ պաշտօնական [illegible] ծրագրին Սուլթանի հրամանով նոյեմբերի 23-ին [illegible], որին ենթարկված են վերջին [illegible] մասնակցող բոլոր անձինք, քննութեան տակ գտնվողները և նոյնպէս բոլոր փախստականները:

ՍՕՖԻԱ։ Պրինցեսուհի Կլէմէնտինան, Ֆերդինանդ իշխանի մայրը, դիմել է մի քանի ազգական Թագաւորների, մանաւանդ նկարելով փախստականների դժբաղդ վիճակը Բուլղարիայում։ Ֆրանց Յոզէֆ կայսրը իր Սօֆիայի ներկայացուցչին հրամայեց յանձնել նրան 10,000 ֆրանկ։

ՍՕՖԻԱ։ Հեղինակաւոր շրջաններում տեղեկացել են, որ սուլթանը վճռել է ընդհանուր ներումն շնորհել բոլոր այն մարդկանց, որոնք խառնված են եղել վերջին ապստամբութեանը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Նագասակի քաղաքը անապահով է յայտարարված խոլերայի պատճառով։ Ներքին գործերի մինիստրը մէկ ամսով արգելեց «Самарскій Листокъ» լրագրին մասնաւոր յայտարարութիւններ տպելը։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Գոլովինսկի, Վորոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ս. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզաւոր. հիւանդ.
ՋԻԿՕՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և ներվային։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ—10—11 ժ. մորթու, վեներական և վիրաբուժութիւն։
Հ. Ի. ԲԱՐԱՆՍԵԱՆՑ—11—12 ժ. մանկաբարձութեան կանանց և երեխայոց հ.
Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.
Գ. Ս. ԹԱՐԽԱՆԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ. երկուշ. չորեք. ուրբաթ։
Ա. Գ. ՂԱՐԱԳԵՕԶԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ. երեքշ. հինգշ. շաբաթ։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ն. Ն. ԹԱՍՏԱՄԲԷԿՈՎ—5—6 ժ. վիրաբուժ. մորթու և վեներական հ.
Գ. Ս. ԼԵՎԻ—6—7 ժ. նեարդային (ելեկտրաբուժութիւն), ներքին և վեներական հ.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՇԵՐԲԻՆԻՆԱ—7—7½ ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
Գ. Ս. ԹԱՐԽԱՆԵԱՆՑ—7½—8 ժ.
Բ. Ս. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7½—8 ժ.

Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (Կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Օ. Յ. ՍՏՎԱՆԻՑԿԻ—ատամ. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

Լոյս տեսաւ
ՊԵՐՃ ՊՌՕՇԵԱՆԻ

ՍՈՍ ԵՒ ՎԱՐԴԻԹԵՐ

վէպը, երկրորդ տպագրութեամբ
Գինն է 1 ր. 20 կ.

Նաև տպագրութեան են յանձնված նոյն հեղինակի «Հացի Խնդիր» և «Ցաւէն» վէպերը։

Դիմել հրատարակչին՝ Баку. Книжный магазинъ С. Д. Арутюнова. 2—7

Վլադիկավկազում նոր բացված
Ս. Յ. ՂԱԶԱՐԵԱՆԻ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԸ
ընդունում և վաճառում է ամեն տեսակ հայերէն գրքեր և հրատարակութիւններ։ Հասցէն՝ Владикавказъ. Книжный магазинъ С. I. Казарова. 10—10

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Այսու առաջարկվում է հայ հեղինակներին ներկայացնել մինչև առաջիկայ 1904 թ. մարտի 15-ը անտիպ աշխատութիւններ հետևեալ պատմական նիւթերի մասին.

1) ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ
2) ՍԱՀԱԿ ԵՒ ՄԵՍՐՈՊ

Աշխատութիւնները պէտք է կազմված լինեն գեղարուեստօրէն և մատչելի լեզուով. ծաւալը երեք տպագրական թերթից ոչ պակաս (թերթը միջին 8-ածալ 16 երես հաշւելով)

Իւրաքանչիւր նիւթի մասին ներկայացրած աշխատութիւններից լաւագոյնը՝ ձեռնհաս անձինքների որոշմամբ, կը պարգևատրվի 150 րուբլի մրցանակով և, իբրև սեփականութիւն, կը տպագրվի գիւղացին հրատարակութեամբ ժողովրդի ընթերցանութեան համար։

Աշխատութիւններն ուղարկելու է պրոֆ. Գր. Խալաթեանին՝ Մոսկվա, Լազարեան ճեմարան։

4—5 Անանուն Գաղտնեան

Готовится къ печатанію
КУРСЪ ДВОЙНОЙ БУХГАЛТЕРІИ
(I часть—практическая)
ЛЕВОНА ГРИГОРЯНЦА
учредителя
„Бухгалтерскаго Кабинета“ въ Батумѣ.
Адресъ для требованій: Батумъ, Левону Григорянцу, Агенту Страховаго О—ва „Эквитебль“.
2—2

Տելեֆօն № 666.
ԱՐԱՔՍԵԱՆԻ ՀԱՒԼԱԲԱՐԻ ՆՈՐ ԹԱՏՐՈՆ
(Կոնստանտինովսկայա փող. տուն Կարչեմեանի)
Կիրակի, հոկտեմբերի 26-ին
Հայ դերասանական խումբը, ղեկավարութեամբ
Գ. Ա. ԱՐԱՔՍԵԱՆԻ
կը տայ երկու ներկայացում
ԱՌԱՒՕՏԵԱՆ ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԳՆԵՐՈՎ
կը ներկայացվի
ԵՐԿՐՈՐԴ
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆ

Դրամա 4 գործ., հեղ. Նեվեժինի։
Մասնակցում են՝ տ.տ. Զաբէլ, Արաքսեան, օր. օր. Բէգբէջեան, Հայկանուշ, Ֆնարիկ, պ. պ. Ամօ-Խարազեան, Վրոյր, Բերոյեան, Խուդանեան, Աղամիրեան, Աղէլխանեան և ուրիշ.
Սկիզբն է ճիշդ 11 ժամին ցերեկվայ։
Տեղերի գները 10-ից մինչև 50 կոպ.

ԵՐԵԿՈՅԵԱՆ ԷԺԱՆԱՑՐԱԾ ԳՆԵՐՈՎ
կը ներկայացվի

ԹԱԳԻ ՀԱՄԱՐ

Ողբերգութ. 5 գործ., հեղ. Ֆրանսուա Կոպպէի։
Մասնակցում են՝ տ.տ. Զաբէլ, Արաքսեան, օր. Ֆնարիկ, պ.պ. Ամօ-Խարազեան, Վրոյր, Բերոյեան, Խուդանեան, Աղամիրեան, Մարիկեան, Աղէլխանեան, Տաշճեան և ուրիշ.
Սկիզբն է ճիշդ 8½ ժամին երեկոյեան։
Տեղերի գները 1 ր. 50 կ. մինչև 30 կ.
1—1 Ղեկավար՝ Գ. Ա. Արաքսեան

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ
ՌՈՒՍԱՑ ՕՊԵՐԱ
Կիրակի, հոկտեմբերի 26-ին
Կը ներկայացվի
ԵՒԳԵՆԻՈՍ ՕՆԵԳԻՆ

Օպերա 3 գործ. 7 պատկ., երաժ. Չայկովսկու։
Մասնակցում են.—Տ.տ. Բէնէ-Բադինա, Կարրի, Կալինինա, Լելինա. պ.պ. Ցիգնէր, Սելեավին, Գլադկով, Րժանով, Գավրիլով։
Սկիզբն է 8 ժամին երեկոյեան։

ԳՐԻԳՈՐԻՈՍ ՄԱՏՎԷԵՎԻՉ

ԻՕԽՎԷԴ

Ընդունելութիւն ատամների և բերանի խոռոչի հիւանդութիւնների, ատամ հանելու, բժշկելու, պլոմբ անելու, մաքրելու և արհեստական ատամներ շինելու։

Հասցէն՝ Михайловская ул., № 108, противъ Кирки։ Ընդունելութիւնը առաւօտեան 10-ից մինչև երեկոյեան ժամի 7-ը։ 1—30

Լոյս տեսաւ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԽՍԱՅԵԱՆԻ

ԿԵԱՆՔԻ ԽՈՐՇԵՐԻՑ

Պատկերներ
Գինն է 20 կոպէկ։

ա. Օրայի հերոսները, բ. Հոգեհացը, գ. Անմեղ զոհ, դ. Սիրոյ յաղթութիւն, ե. Բանտարկեալները, զ. Բժիշկը, է. Ծառախօսը։

Պահեստը՝ Թիֆլիս «Գուտտենբերգ» գրախանութում։ Հեղինակին դիմողները ստանում են զեղչում 25—50 րուբլիին 28%, իսկ 50 րուբլուց աւելին 28%։ Ճանապարհածախսը գնողների վրայ։ Ապառիկ, նալօժով կամ կամիսիայով վաճառելու չէ ուղարկվում։

1—5

Գերմանիայում աւարտած մի հայ օրիորդ
ցանկանում է
ԴԱՍԵՐ ՈՒՆԵՆԱԼ
ՖՐԱՆՍԵՐԷՆ և ԳԵՐՄԱՆԵՐԷՆ
Սուդեբնայա փողոց, տուն Զալիբզէյի, № 15, բնակարան տ. Սիրանոյշի
3—3

Լոյս տեսաւ
ԲԺԻՇԿ-ՈՒՍՍԱՆՈՂ ԳԷՈՐԳ ՄԱՂԱՔԵԱՆԻ

ՄԱՅՐ ԵՒ ԵՐԵԽԱՅ

Գինն է 40 կոպ.

Դիմել Тифлисъ, книж. магазинъ Гуттенбергъ կամ Армянск. баз. Гостинн. дворъ Манташева, М. Магакяну.

Գումարով առնողներին առանձին զեղչում կը լինի։ 7—10

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Մոդնու ս. Գէորգ եկեղեցու միաբան տէր Սիմէօն Չմշկեանցի պատւին կատարելի յոբելեանը՝ որ նշանակված էր սոյն հոկտեմբերի 26-ին, կիրակի օրը, յետաձգվում է ցնոր կարգադրութիւն։ 2—2

Վ Ա Ճ Ա Ռ Վ Ո Ւ Մ Ե Ն
Ե. ԹՈՓՉԵԱՆԻ ԽՄԲԱԳՐԱԾ
1904 Թ. „ԼՈՅՍ“ ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ

որոնք հիմնովին տարբերվում են բոլոր միւս օրացոյցներից թէ արտաքին ճշդութեամբ եւ թէ ներքին բովանդակութեամբ։

ԳՐՊԱՆԻ ՕՐԱՑՈՅՑԸ բաղկացած է 266 երեսից և զարդարված 17 գունաւոր պատկերով—(12 ամիս, ս. Էջմիածին, ս. Սահակ, ս. Մեսրոպ, Աբովեան և Ահարոնեան)։ Յաւելուածը՝ Հայրապետ. ամենայն հայոց։ Կաթոլիկ և բողոքական համայնք։ Տօնական և հայկական անուններ։ Ժամանակը և նրա չափերը։ Չափեր։ Կովկաս. քաղաքների ազգաբնակութիւնը։ Աստղագիտութիւն։ Նամակագրութիւն։ Պոստ։ Հեռագիր։ Խնայողական գանձարաններ և մարկաներ։ Երկաթուղի։ Պոստային ճանապարհներ։ Նաւագնացութիւն։ Բնակարանների հարկ։ Անգագիր։ Իրաւաբանական տեղեկութիւն։ Մուրհակ։ Տոկոս։ Օգտակար ընկերութիւններ. Ե. Թոփչեանի։ Ինչ է երազը—Բժ. Ս. Բուզուղեանի։ Բժշկարան—Բժ. Լ. Քալանթարեանի։ Ատամնաբոյժի խրատները—Ն. Կաճկաճեանի։ Ս. Էջմիածին. ս. Սահակի, Մեսրոպի, Աբովեանի և Ահարոնեանի կենսագրութիւններ։ Կաթնատնտեսական, այգեգործական և երկրագործական խորհուրդներ։ Հետաքրքրական, զուարճալիք, տնային խորհուրդներ, օգտակար գիտելիքներ, զուարճալիք և յիշատակարան։

ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑԻ տախտակը յատուկ պատրաստել տուած մի շքեղ պատկեր է՝ ս. Էջմիածին, Անիի աւերակները և 12 հայ փիլիսոփաներ։ Յաւելուածը՝ I երես—Հայկական առածներ։ Նշանաւոր դէպքեր հայ կեանքից։ Ընտիր մտքեր։ Յիշատակարան։ II երես—12 պատկեր բացատրութիւններով։ Եկեղ. և ազգային տօները։ Բժշկի փոքրիկ խրատները—Բժ. Ս. Բուզուղեանի։ Խոհարարական խրատներ—Յ. Մելիք-Բախտամեանի։ Զուարճալի հատուածներ Յ. Պարոնեանի։ Փոքրիկ պատմուածքներ Ահարոնեանի, Շիրվանզադէի, Լէօի և Փափազեանի։ Բանաստեղծական փնջիկ։ Ժողովրդ. երգեր։ Թարգ. ընտիր հատուածներ։ Արձակ բանաստեղծութիւններ։ Անեկդոտներ, հանելուկներ շուտասելուկներ։ Այլ և այլք։

ԳՆԵՐԸ գրպանի օրացոյցը 20 կոպ., պատինը 50 կոպ.։ Գումարով գնողներին ձեռնտու զեղչում։
Դիմել՝ Тифлисъ. Троицкая 11. Е. Топчяну. Արտասահմանից՝ Tiflis. Troizkaia 11. E Toptschian.
ՍԵՂԱՆԻ օրացոյց հանդէսը կը վաճառահանվի մի քանի օրից յետոյ։

ՆՈՐԻՑ ԲԱՑՎԱԾ Է

ԵՂԲ. Ա. ԵՒ Ա. ՄԻԼՕՎՆԵՐԻ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԱՆ ՄԱՆՐԱԾԱԽՔԻ ԽԱՆՈՒԹԸ
Գոլովինսկի պրոսպեկտի վրա, Արաֆէլովի տանը։
Ստացված են մեծ քանակութեամբ հետևեալ ապրանքները.

Մետաքսեայ կտորներ, սև և գունաւոր, հագուստի համար։
Մետաքսեայ և բրդեայ կտորներ, «Fantaisie» շապիկների համար։
Բրդեայ կտորներ «Nouvauté» կանանց կոստիւմների համար։
Մահուդ ֆրանսիական և ռուսական գործարանների, բոլոր գոյների, կանանց կոստիւմների համար։
Կտորներ պարահանդէսի շորերի համար, մետաքսեայ, գազի, բրդեայ և ծակոտկէն։
Անգլիական վէլվէտ զանազան նկարների և գոյների։
Բամբակէ զանազան գործարանների։ Մետաքսեայ և բրդեայ յուբկաներ, շալեր, վերմակներ, ֆլանել և շատ ուրիշ ապրանքներ։ 1—3

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԻՒՐԱՆՈՑ
ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՕԼՈՒՄ

Քաղաքի կենտրոնում, Գեներալսկայա փողոցի վրա, Ալյանեանի քարվանսարայում, նոր բացված է մաքուր հիւրանոց, կահաւորված սենեակներով և ամեն յարմարութիւններով։ Կան նոյնպէս և ապրանքների համար ամբարներ։ Գները չափաւոր են։ 2—6

Ղ. ԱՂԱՅԵԱՆՑԻ

ՊԱՏԿԵՐԱՒՈՐ ԱՅԲԲԵՆԱՐԱՆ

Մեծերի և փոքրերի համար, մեծերի համար իբրև ինքնուսոյց։ Գինն է 13 կոպէկ, հարիւրով գնողներին 10 կ.։ Դրսերից կարող են ստանալ որ և է անձի ձեռքով։ Հեղինակը ծրարով պատուէրներ կատարելու յարմարութիւն չունի։ 5—10

ՆԿԱՐԻՉ ԳԷՈՐԳ ԲԱՇԻՆՋԱՂԵԱՆԻ

ՆԿԱՐՉԻ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳԻՐՔԸ

6 տպագրական թերթից բաղկացած, շքեղ վերժէ թղթի վրա տպած, ընտիր արտասահմանեան թղթով շապկած, լոյս տեսաւ և ծախվում է Պետերբուրգում։

Գինն է 35 կ. ճանապարհածախսով

Դիմել հետևեալ հասցէով. С. Петербоургъ, „Пушкинская скоропечатня“, Христафору Башинджагянъ, Лештуковъ пер., д. № 4.
10—10

Իմ աշխատութեամբ լոյս են տեսել հետևեալ

ԿՐՕՆԻ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ

Ծխականաց համար.

1. Դասատետր կրօնի ա. տարի . — 25
2. » » բ. » . — 20
3. » » գ. » . — 30
4. Հին-ուխտ գ. » . — 35
5. Նոր-ուխտ ե. » . — 40
6. Գործք առաքելոց զ. » . — 40

Ուսուցչաց համար.

7. Ուղեցոյց կրօնի—Հին-ուխտ (սպառ.) — —
8. » » —Նոր-ուխտ . 2— 5
9. Ուսումն քրիստոնէական կրօնի Դ. հ. 1—50
10. » » » Ե. » — 50

Ինձ դիմողները ստանում են 1. 6 տարիների համար 25%. 2, 3, 4, 5 տարիների համար 20%, իսկ 7, 8, 9, 10 տարիների համար 35% զեղչ։

Կարելի է դիմել—1) ինձ (Коммерческое училище), 2) Центральная книжная торговля և 3) Книжный магазинъ „Гуттенбергъ“.
28—100 Սահակ քահ. Սահակեանց

ԱԿՆԱԲՈՅԺ

Յ. ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ

Ընդունելութիւնը ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 6
Մադաթեան փ. Աբովեանցի տ. № 11 Ալեքսանդրեան այգու դիմաց։ 17—25

Հայոց Դրամատիքական Ընկերութեան Վարչութիւնը

Հրաւիրում է ընկերութեան անդամներին

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

որ տեղի է ունենալու կիրակի, նոյեմբերի 2-ին, առաւօտեան ժամը 11-ին, Թիֆլիսի Արտիստիքական ընկերութեան շէնքում։

Զբաղմունքի առարկաներն են. 1) Իսկական և նպաստող անդամների ընտրութիւն։ 2) Անցած տարվայ հաշւի և վերստուգող յանձնաժողովի զեկուցումն։ 3) Նախահաշւի առաջարկում 1903/4 թատրոնական տարվայ համար։ 4) Հրահանգ տիկին Մ. Մակարեանի անվան մրցանակաբաշխութեան յանձնաժողովի համար և այդ յանձնաժողովի անդամների ընտրութիւն։ 5) Վարչութեան երկու անդամների և երեք փոխանդամների ընտրութիւն։ 6) Վերստուգող յանձնաժողովի երեք անդամների և երկու փոխանդամների ընտրութիւն։ 7) Ընթացիկ գործեր։

Ժողովին մասնակցելու իրաւունք ունեն ընկերութեան բոլոր անդամները, որոնք տուել են առաջին տարվայ անդամավճարը։

Ընկերութեան անդամները կարող են նախօրօք ստանալ ժողովին ներկայացվելիք հաշիւը Սաղանաճեանի մագազինում։

(24-ին, 26-ին հոկտ. և 2-ին նոյեմբ.) 2—3

Дозволено Цензурою. Тифлисъ, 25 Октября 1903 г.
Электропечатня Груз. Изд. Т—ва, В. Вельяминовская ул.